ՀՈՒՇԱԳԻՐ

համագործակցության մասին

ք. Երևան «25» փետրվարի 2015թ.

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատը, ի դեմս նախագահ Արա Զոհրաբյանի (այսուհետ՝ Կողմ 1 կամ Պալատ), որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Փորձաքննությունների ազգային բյուրո» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ի դեմս տնօրեն Արտաշես Ջավադյանի, (այսուհետ՝ Կողմ 2 կամ Բյուրո), որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ միասին՝ Կողմեր), կնքեցին սույն հուշագիրը հետևյալի մասին.

1. ՀՈՒՇԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Սույն հուշագրով Կողմերը նախատեսում են Հայաստանի Հանրապետության օրենսդրության շրջանակներում համագործակցել հուշագրի 2-րդ մասով նախատեսված ուղղություններով՝ իրենց հնարավորությունների, միջոցների և փորձի կիրառմամբ:

2. ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Սույն հուշագրով համագործակցության շրջանակներում Բյուրոն պատրաստակամ է փաստաբանների համար ապահովել վերջիններիս կողմից վարվող քաղաքացիական, վարչական և քրեական գործերի քննության ժամանակ ծագող հատուկ գիտելիքներ պահանջող հարցերի պարզաբանման նպատակով անհրաժեշտ և Բյուրոյի կողմից իրականացվող փորձաքննությունների (հետազոտությունների, տեխնիկական փորձարկումների, վերլուծությունների) կատարումը պայմանագրային հիմունքներով (անկախ դատարանի կամ քրեական վարույթն իրականացնող մարմնի կողմից համապատասխան փորձաքննություն նշանակված լինելու հանգամանքից) ըստ Բյուրոյի հաստատած սակագների՝ փաստաբանների կողմից տրամադրված փորձաքննության ելակետային տվյալներ պարունակող օբյեկտների (փաստաթղթերի, առարկաների, նմուշների կամ այլ օբյեկտների՝ կախված փորձաքննության տեսակից) հիման վրա:

2.2. Սույն հուշագրով Կողմերը համագործակցում են նաև.

2.2.1. երկկողմանի հետաքրքրություն ներկայացնող իրավաբանական, ուսումնակրթական բնույթի ծրագրերի, այդ թվում՝ համապատասխան ոլորտներում փորձաքննությունների իրականացման,

2.2.2. գիտական կոնֆերանսների, սեմինարների, խորհրդակցությունների կազմակերպման,

2.2.3. գիտական, մասնագիտական գրականության, մեթոդական ձեռնարկների, աշխատությունների, պարբերականների և այլ նյութերի փոխանակման,

2.2.4. համատեղ աշխատանքային խմբերի ձևավորման և Կողմերի լիազորված աշխատակիցների միջոցով փոխադարձ հետաքրքրություն

ներկայացնող հարցերի քննարկման և լուծման,

2.2.5. Կողմերի գործունեությանն առնչվող համապատասխան նյութերի հրատարակման,

2.2.6. սույն հուշագրի գործողության շրջանակներում Կողմերի գործառույթների կատարման համար, ըստ աշխատանքային անհրաժեշտության, համապատասխան սարքավորումների, լաբորատոր և այլ միջոցների օգտագործման,

2.2.7. ինովացիոն, դրամաշնորհային ծրագրերի համատեղ իրականացման,

2.2.8. համատեղ իրականացվող աշխատանքների արդյունքների, դրանց խոչընդոտող հանգամանքների մասին տեղեկատվություն հայցելու և ստանալու,

2.2.9. երկկողմանի հետաքրքրություն ներկայացնող՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության շրջանակներում Կողմերի գործունեությանը և մասնագիտացմանն առնչվող գիտագործնական, ինչպես նաև մասնագիտական և կազմակերպական բնույթի այլ ուղղություններով:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կողմերը պարտավորվում են ձեռնարկել բոլոր միջոցները սույն հուշագրով ստանձնած իրենց պարտականությունները բարեխղճորեն, Կողմերի միջև համաձայնեցված ժամկետներում կատարելու համար: Սույն հուշագիրը Կողմերից ոչ մեկի համար ֆինանսական պարտավորություններ չի առաջացնում, բացառությամբ հուշագրի 4-րդ մասով նախատեսված դեպքերի:

4. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՆԵՐԸ

Կողմերն առանձին դեպքերում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փոխադարձ համաձայնությամբ սույն հուշագրի 2-րդ մասով սահմանված կոնկրետ ուղղությունների հետ կապված ծառայությունները կարող են իրականացնել դրանցից յուրաքանչյուրի համար նախատեսված ֆինանսական բնույթի գրավոր համաձայնագրերով՝ կախված այս կամ այն Կողմի ուժերով իրականացվող աշխատանքների ծախսատարությունից:

5. ՀՈՒՇԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

5.1. Սույն հուշագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման օրվանից և գործում է անորոշ ժամկետով:

5.2. Սույն հուշագիրը կարող է վաղաժամկետ լուծվել Կողմերից յուրաքանչյուրի նախաձեռնությամբ՝ ենթադրվող դադարեցման օրվանից ոչ ուշ, քան 1 (մեկ) ամիս առաջ մյուս Կողմին գրավոր ծանուցմամբ:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն հուշագրով նախատեսված պարտականություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար Կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության

հետևանքով, որը ծագել է հուշագիրը կնքելուց հետո և Կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են՝ երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն հուշագրով պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա Կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել սույն հուշագիրը՝ այդ մասին նախապես տեղեկացնելով մյուս Կողմին:

7. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

Սույն հուշագրի և դրա հիման վրա Կողմերի միջև կնքվող առանձին համաձայնագրերի կատարման ընթացքում առաջացած վեճերն ու տարաձայնությունները լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ համաձայնություն ձեռք չբերվելու դեպքում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

8. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

8.1. Սույն հուշագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել Կողմերի փոխադարձ գրավոր համաձայնությամբ և համարվում են դրա անբաժանելի մասը:

8.2. Սույն հուշագրով ստանձնած պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում Կողմերը կրում են պատասխանատվություն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

8.3. Սույն հուշագրով չնախատեսված հարցերը կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

8.4. Սույն հուշագիրը կնքված է հայերեն լեզվով, հավասար իրավաբանական ուժ ունեցող երկու օրինակից: Յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կողմ 1 **«Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ»**	**Կողմ 2** **«Փորձաքննությունների ազգային բյուրո» ՊՈԱԿ**
հասցե՝ 0010, ք.Երևան, փ. Զաքիյան 2, հեռ.՝ (+37410) 600 701	հասցե՝ 0004, ՀՀ, ք.Երևան, Իսակովի 24 հեռ.՝ (+374 10) 77-77-10
Նախագահ՝ Արա Զոհրաբյան	Տնօրեն՝ Արտաշես Զավադյան